ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 դեկտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

186
(2666)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 161

«Ժողովուրդ» օրաթերթը, 2022 թվականին նոր շարք սկսելով, ներկայացրել է 160 սուտ եւ մանիպուլյացիա, որն այս տարվա ընթացքում հնչեցրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այսօր «Ժողովուրդ» օրաթերթի տարեվերջյան համարն է, եւ քանի որ Լաչինի միջանցքն արդեն 10 օր է՝ շրջափակման մեջ է, որոշեցինք առանձնացնել մի քանի ստեր, որոնք վերաբերում են հենց Արցախին եւ այդ հարցի կարգավորմանը: «Սերժ Սարգսյանի թողած բանակցային ժառանգության մեջ չի նշվում, թե հանրաքվեն ԼՂ-ում է տեղի ունենալու: Ասվում է, որ ԼՂ ամբողջ բնակչությունը մասնակցելու է հանրաքվեին: Ավելի կոնկրետ ասվում է՝ համաժողովրդական հանրաքվե, որին մասնակցելու է ԼՂ ամբողջ բնակչությունը, այսինքն՝ ԼՂ ամբողջ բնակչությունը նույն ինքը համաժողովրդականը չէ»,- հունիսի 15-ին ասել էր Փաշինյանը: Հոկտեմբերի 5-ին՝ ՀՀ Ազգային ժողովում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների հարցերին պատասխանելիս, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ սուտ է խոսել՝ հայտարարելով. «Այն պահին, երբ Հայաստանն ընդունել է «Մադրիդյան սկզբունքները»՝ որպես բանակցությունների հիմք, այդ պահից սկսած՝ճանաչել է Ղարաբաղը Ադրբեջանի կազմում»: Իրականությունը, սակայն, այն է, որ դեռեւս 2007թ.-ին որպես բանակցությունների հիմք ընդունված «Մադրիդյան սկզբունքները» ճիշտ հակառակի մասին են վկայել: Մեկ անգամ էլ ԱԺ-ում իր ելույթին հաջորդած հարցուպատասխանի ընթացքում ասաց, որ, իր կարծիքով, այն ուժերը, որոնք 1998 թվականին Լեւոն Տեր-Պետրոսյանին իշխանությունից հեռացրին Ղարաբաղի հարցը փուլային տարբերակով լուծելու մտադրության համար, 20 տարի անց հանգեցին նույն կետին՝սեղանին թողնելով փուլային կամ հիպերփուլային լուծման տարբերակը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի 10.01.2023-ին:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու յուրայինների հարաբերություններն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ մոտ երկու ամիս առաջ տեղի ունեցած համագումարից հետո լարվել են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Փաշինյանը որեւէ կերպ չի հաշտվում կուսակցության վարչության անդամների ընտրության ժամանակ տեղի ունեցած ընտրակեղծարարության հետ, ինչից հետո վարչության անդամները փոփոխվել էին: Համենայնդեպս, թիմակիցների հետ հանդիպումներին միշտ հիշեցնում է այդ մասին: «Ամեն անգամ, երբ Փաշինյանը ոչ սեփական թիմից նշանակումներ է անում, ու դա հարուցում է յուրայինների զարմանքն ու զայրույթը, վարչապետը բոլորին հորդորում է «հանգիստ նստել տեղները», քանի որ նրանք իր միակ՝անթերի ու չկեղծված ընտրություններ կազմակերպելու տիտղոսը գետնովն են տվել: Փաշինյանը դա ներել չի կարողանում, քանզի թե՛ ՀՀ-ում գործող քաղհասարակության ներկայացուցիչները, թե՛ եվրոպական տարբեր կառույցներ միշտ էին առանձնացնում 2018թ.-ից ի վեր կազմակերպվող արդար ու թափանցիկ ընտրությունները: Այժմ, սակայն, մերօրյա իշխանություններն այդ մի խաղաթղթից էլ են զրկվել»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց իշխանամերձ մեր աղբյուրը: Մեզ նաեւ փոխանցեցին, որ Նիկոլ Փաշինյանը թիմակիցներին ասում է, թե նրանց մեծամասնության հետ այլեւս չի ուզում ճանապարհ գնալ: Ընդգծում է նաեւ, թե ժամանակն է նոր շունչ հաղորդել ՔՊ-ին, ու հին յուրայիններին նոր յուրայիններով փոխարինել. վերջին ապացույցը ՀՀ փոխվարչապետի պաշտոնում Տիգրան Խաչատրյանի նշանակումն էր:

Այդքան չարչրկված խաղաղության պայմանագիրը, կարծես թե, միս ու արյուն ստանալու փուլ է մտել, հայկական կողմը, սակայն, նոր-նոր է հասկանում, թե դրանից հետո ինչ նոր փորձություններ կարող են կախվել մեր երկրի գլխին: Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը երեկ հայտարարեց, թե այն մինչեւ տարեվերջ կարող է ստորագրվել, վարչապետ Փաշինյանն էլ հավելեց, թե հայկական կողմի առաջարկները Բաքվին են փոխանցվել, ու եթե Ադրբեջանն ընդունի դրանք, ապա փաստաթուղթը կստորագրվի: Սրան զուգահեռ՝ ՌԴ արտաքին գործերի նախարարությունը երեկ տեղեկացրեց, որ հայկական կողմը խնդրել է հետաձգել այսօր՝դեկտեմբերի 23-ին Մոսկվայում արտգործնախարարների մակարդակով կայանալիք ՀՀ-Ադրբեջան-ՌԴ եռակողմ հանդիպումը: Հայաստանյան իշխանությունը, որ միջազգային բոլոր հարթակներում հայտարարել է, թե պատրաստ է ստորագրել խաղաղության պայմանագիրն ու խոսել է հարեւանների հետ խաղաղ ապրելու դիրքերից, այժմ փաստացի ու արդարացի հարցեր է ուղղում ինքն իրեն. իսկ ի՞նչ է լինելու, երբ փաստաթուղթը ստորագրվի, բայց Ադրբեջանը շարունակի իր ձեւով՝բռնությամբ կամ զոռբայությամբ հարցերը լուծել: Դրա ապացույցը հենց այս օրերին Արցախում տեղի ունեցողն է՝ 2020-ի նոյեմբերի 9-ի հայտարարության դրույթները խախտելով ու Լաչինի միջանցքը փակելով 120 հազար հայի շրջափակման մեջ պահելը: Թե ինչ լուծում կգտնեն հայ դիվանագետները, ու խաղաղության պայմանագիրը երբ, ինչ տեսքով կստորագրվի, դեռ հարց է, բայց հուսանք՝ չարչրկված այդ պայմանագիրը հայկական շահերը չի ոտնահարի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը «Մարտի 1»-ի գործով հսկողություն իրականացնող դատախազին փոխել եւ որպես հսկող դատախազ է նշանակել Հայկ Հովհաննիսյանին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝օգոստոսին «Մարտի 1»-ի գործի վրա հսկողություն իրականացնող դատախազ Ազատ Մարգարյանը ազատվել էր պաշտոնից, նրան փոխարինել էր Կարապետ Համբարձումյանը, սակայն այս տարվա նոյեմբերի 15-ին Աննա Վարդապետյանը նրան տեղափոխել է այլ պաշտոնի՝նշանակելով ՀՀ գլխավոր դատախազության՝բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, եւ ներկայումս, բացառությամբ դատարանում քննվող մասի, ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Հայկ Հովհաննիսյանն է գործի նկատմամբ հսկողություն իրականացնում: Գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնից հաստատեցին «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունը: Այս պատմության մեջ ուշագրավն այն է, որ դատախազներ են փոխվում քրեական գործով, սակայն «Մարտի 1»-ի գործը այդպես էլ մնում է չբացահայտված: Հակակոռուպցիոն կոմիտեն մեկը մյուսի հետեւից կարճում է «Մարտի 1»-ի գործերը՝վաղեմության հիմքով, եւ դեռ ավելին՝մինչ օրս հայտնի չէ, թե ով այդ օրը սպանեց 10 քաղաքացիներին Երեւան քաղաքի կենտրոնում:

ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐ

ՄԱՆԴԱՏԸ ՊԵՏՔ Է ԸՆԴԼԱՅՆՎԻ

«Համախմբում» շարժման նախաձեռնող խումբը երեկ մամուլի ասուլիս էր հրավիրել ՀՀ կառավարության շենքի դիմաց, որի ընթացքում պահանջագիր ներկայացվեց ՀՀ կառավարություն՝ գործողություններ ձեռնարկելու Արցախի շրջափակման վերացման ուղղությամբ: Հիշեցնենք, որ ակնհայտ շինծու «բնապահպանական» պատճառաբանությամբ Ադրբեջանը Արցախի Հանրապետության դեմ իրականացնում է ագրեսիա, որի հետևանքով արդեն ավելի քան 10 օր է, ինչ արգելափակվել է Արցախն արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը, իսկ Հայաստանի Հանրապետությունը, լինելով Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավոր, խուսափում է կատարել իր անբեկանելի պարտավորությունները Արցախի բնակչության նկատմամբ: «Ժողովուրդ» օրաթերթը կառավարության դիմաց զրուցել է «Համախմբում» շարժման նախաձեռնող խմբի անդամ Ավետիք Չալաբյանի հետ:

-Պարոն Չալաբյան, Դուք իշխանությունների կողմից քայլերի հաջորդականություն եք ներկայացնում, իշխանություններն էլ հակընդդեմ քննադատություն են հնչեցնում, թե Լաչինի միջանցքը հայկական կողմը չի փակել, այլ ադրբեջանցիներն են փակել, հետևաբար ի՞նչ կարիք կա գալ կառավարության դիմաց եւ ցույց անել: Այդ քննադատություններին ինչպե՞ս եք վերաբերվում:

-Իշխանությունը չպետք է մեզ քննադատի, այլ մենք՝ իշխանությանը: Քաղաքացիներն են ընտրել իշխանությունը, եւ քաղաքացիներն իրավունք ունեն իշխանությունից պահանջել, ոչ թե հակառակը: Այսինքն՝ իրենք չեն կարող քննադատել քաղաքացիներին կամ նրանց արարքները: Երկրորդը՝ մենք ցույց չենք անում կառավարության դիմաց, այլ մամուլի ասուլիս, եւ մենք ոչ թե եկել ենք կառավարության դիմաց բողոքի ակցիա անելու, այլ հանձնում ենք պահանջագիր, եւ պահանջագրի

մեջ կետեր են, որոնք ինչ-որ իմաստով հուշում են այս իշխանությունների համար: Եթե այս իշխանությունը խելամիտ գործի, ապա կհասկանա, որ մեր ներկայացրած հուշումներից պետք է օգտվի, ոչ թե անընդհատ հակընդդեմ պնդումներ անի: Եվ երրորդը՝ այո, ճանապարհը փակել են ադրբեջանցիները, բայց խնդիրն այն է, որ կա եռակողմ համաձայնությունը 2020 թվականի նոյեմբերի 9-ի, որի կողմերից մեկը Հայաստանի Հանրապետությունն է: Եթե Հայաստանի Հանրապետությունն այդ եռակողմ համաձայնագիրը ստորագրել է, ապա հարց է առաջանում՝ եթե մյուս կողմերը դա խախտում են, ապա ի՞նչ է անում Հայաստանի Հանրապետությունը: Տեսեք, եթե Դուք մի փաստաթուղթ ստորագրեք ինձ հետ, ես խախտեմ, ապա Դուք ի՞նչ կանեք այդ դեպքում. օրինակ՝ դատարան կդիմեք, եւ դա հրաշալի է: Սակայն միջազգային հարաբերություններում, որպես այդպիսին, դատարան գոյություն չունի: Միջազգային հարաբերությունները կառուցված են ուժային հաշվեկշռի վրա: Դա նշանակում է, որ եթե դիմացի կողմը խախտում է պայմանագիրը եւ ուժ կիրառում, ապա կամ մենք պետք է ուժ կիրառենք, կամ պետք է համոզենք, որ այլ կողմերն ուժ կիրառեն նրա նկատմամբ: Դա է միակ ելքը:

-Բայց կարողանո՞ւմ ենք նման բան անել:

-Դե իմ ասածն էլ հենց այն է, որ եթե չեն կարողանում այս իշխանությունները նման կերպ գործել, ապա պետք է հրաժարական տան: Ամեն անգամ սեփական ապաշնորհությունը մեր վզին կապել պետք չէ: Մենք արդեն չորս տարի է՝ ապրում ենք սթրեսի պայմաններում, երբ այս իշխանությունն ամեն ինչ անում է, հետո գալիս ու հիմնավորում է իր ձախողումները: Ժողովուրդը հավատում ու ասում է՝ երեւի ուրիշ բան հնարավոր չէ, իսկ մենք ասում ենք, որ հնարավոր է. հրաժարական տվե՛ք, գնացե՛ք, ցույց տանք, որ հնարավոր է:

-Իշխանական պատգամավորների մի մասն ասում է, թե ռուսական կողմն իր պարտականությունը չի կատարում, թերանում է, իսկ մյուս մասն էլ, հակառակը, ասում է՝ չեն կատարում, որովհետեւ բավարար մանդատ չունեն, եւ պետք է այդ մանդատի ծավալներն ավելի ընդլայնեն: Դուք ի՞նչ կարող եք ասել այդ մասին:

-Ես կարծում եմ, որ մանդատի ծավալները պետք է ընդլայնել, եւ դա մեր պահանջագրի երկրորդ կետն էր, եւ հենց այդպես էլ հնչում է՝ ընդլայնել մանդատը եւ նրան տալ ՄԱԿ-ի միջազգային կարգավիճակ: Ես կարծում եմ, որ դա է ճիշտ: Ես չէի ասի, որ իշխանական պատգամավորներից մի քանիսի հետ եմ նույն տեսակետի, այլ կասեի, որ նրանք են մեզ հետ նույն տեսակետին, բայց մենք կարծում ենք հետեւյալը. այս իշխանությունները ժամանակին լուրջ սխալ են թույլ տվել, որ համաձայնել են նոյեմբերի 9-ի կրակի դադարեցմանը, առանց խաղաղության միջազգային երաշխիքների, եւ ստացել են միայն ՌԴ երաշխիքները՝ մի երկրի, որը հիմա գտնվում է պատերազմական իրավիճակում: Եթե մենք ունենանք միջազգային մանդատ, կարծում եմ՝ դա մեզ համար շահեկան կլինի:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՕՐԵՆՔՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ

2023 թվականի հունվարի 1-ից բոլոր իրավաբանական անձինք պարտավոր են ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով (bo.e-register.am): Հայտարարագիրը չներկայացնելու եւ ոչ պատշաճ ներկայացնելու համար սահմանված է պատասխանատվություն:

Նախորդ տարիներին հայտարարագիրը ներկայացրած անձինք եւս պարտավոր են մինչեւ 2023 թվականի փետրվարի 20-ը գործակալություն ներկայացնել հաստատում առ այն, որ իրական շահառուների վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տվյալներ կամ փոփոխված տեղեկություններ իրական շահառուների վերաբերյալ:

Եվ չնայած այս կանոնները գործելու են հունվարի 1-ից, սակայն շատերն անգամ տեղյակ չեն, որ նման կարգավորումներ են առկա, եւ պետք է ներկայացնեն հայտարարագիր: Ar2Lur.a2-ը ներկայացնում է հայտարարագիր ներկայացնելու կարգը:

Այսպիսով, հայտարարագրի համար հաստատված է համապատասխան ձեւաթուղթ, որը լրացվում է էլեկտրոնային տարբերակով եւ ներկայացվում Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն: Հայտարարագիրը կազմված է մի քանի բաժնից, տեղեկություններ են լրացվում միջանկյալ իրավաբանական անձանց, իրական շահառուների մասին տվյալներ: Հայտարարագրով ստացված տվյալները բաց են լինելու, այսինքն՝ պետական ռեգիստրի գործակալության կայքում հասանելի են լինելու բոլոր իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

Նշված պարտավորության ժամկետը լրանում է 2023 թվականի մարտի 1-ին: Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքով սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելն առաջացնում է վարչական պատասխանատվություն: Սկզբում կլինի նախազգուշացում, հաջորդ փուլում հնարավոր է լինի նաեւ վարչական տուգանք՝ մինչեւ 100 հազար դրամի սահմաններում:

Պատասխանենք մի քանի գլխավոր հարցերի.

Ո՞վ է իրական շահառուն

Իրավաբանական անձի իրական շահառուն ֆիզիկական անձ է, որին փաստացի պատկանում է կազմակերպությունը, կամ որն իրականում վերահսկում է կազմակերպությունը: Իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու չափանիշները սահմանվում են օրենքով:

Ի՞նչ ժամետներում եւ ի՞նչ կարգով իրավաբանական անձինք պետք է ներկայացնեն հայտարարագրերը

Իրավաբանական անձինք պարտավոր են իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը եւ դրա հետագա փոփոխությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնել Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

Հայտարարագիրը ներկայացնելու համար անհրաժեշտ է bo.e-register.am համակարգում մուտք գործել կազմակերպության էջը եւ առցանց լրացնել ու հանձնել էլեկտրոնային հայտարարագիրը:

Նախորդ տարիներին հայտարարագիր ներկայացրած անձինք մինչեւ փետրվարի 20-ը պետք է տեղեկատվություն ներկայացնեն նախորդ հայտարարագրում նշված տեղեկությունների արդիականության մասին կամ պետք է ներկայացնեն փոփոխված հայտարարագիր:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼ

Վահան Քերոբյանի ղեկավարած ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 50 հուշամեդալ է գնել մեկ անձից գնման սկզբունքով եւ Էմիլ Գրիգորյանի անվան Երեւանի ոսկերչական գործարանին վճարել ընդհանուր 1 մլն 882 հազար 500 դրամ: Նշենք, որ այս նույն ընկերության հետ երկու անգամ է պայմանագիր կնքվել. դրանցից մեկով ընկերությանը վճարվել է 970 հազար դրամ, որով գնվել է 20 հատ ոսկեպատ արծաթ հուշամեդալ՝ յուրաքանչյուրը 37 հազար դրամ արժողությամբ, 20 հատ հուշամեդալի տուփեր: Մեկ այլ պայմանագրով 912 հազար 500 դրամ է ծախսվել՝ 25 հատ արույր ոսկեպատ հուշամեդալ՝ յուրաքանչյուրը 19 հազար դրամ արժողությամբ, 5 հատ արծաթ ոսկեպատ՝ յուրաքանչյուրը 37 հազար դրամ, եւ 30 հատ հուշամեդալի տուփ գնելու համար: Ուշագրավն այն է, որ Էմիլ Գրիգորյանի անվան Երեւանի ոսկերչական գործարանը հաճախ է հայտնվում մամուլի ուշադրության կենտրոնում: Բոլորովին վերջերս՝ այս տարվա դեկտեմբերի 14-ին, ոստիկանության Կենտրոնական բաժին ահազանգ էր ստացվել Արշակունյաց պողոտա 14 հասցեում գործող «Էմիլ Գրիգորյանի անվան Երեւանի ոսկերչական գործարան» ԲԲԸ խանութ-սրահի աշխատակցից, որը հայտնել էր, որ խանութից գողացել են տարբեր տեսակի ոսկյա զարդեր՝ նախնական տեղեկություններով պատճառելով 350 հազար դոլարի վնաս: Այս տարվա ապրիլին ուշագրավ հանգամանքներ ի հայտ եկան դարձյալ Էմիլ Գրիգորյանի մասով. նրա նկատմամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես խափանման միջոց էր ընտրվել գրավը՝ 100.000.000 ՀՀ դրամի չափով: Մեղադրանքներ էին առաջադրվել Երեւանի ոսկերչական գործարանի նախկին եւ ներկա տնօրենների, «Գնոմոն»-ի տնօրենին: Այս ընկերությունը ՊԵԿ-ի կողմից եւս տարբեր ժամանակներում տուգանվել է: Փաստորեն, անբարեխիղճ ընկերությունը շարունակում է նոր պատվերներ ստանալ Վահան Քերոբյանի կողմից, այն էլ՝ «մեկ անձից գնում»-ի սկզբունքով՝ այն, ինչ ժամանակին կոռուպցիա էր համարում Նիկոլ Փաշինյանը: Առանց մրցույթի գումարների բաշխում....

ԴԱՏԱՎՈՐԻ ՈՍԿԻՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Երեւան քաղաքի Օրբելի փողոցում գտնվող շենքի բնակարաններից մեկում հայտնաբերված շուրջ 12,5կգ ընդհանուր քաշով ոսկին գտնվել է ՀՀ դատավորներից մեկի բնակարանից: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ ՀՀ դատավորը մահվանից առաջ տունը կտակել է դստերը, եւ նրա դուստրը երկար ժամանակ երկրում չի բնակվել: Ավելի ուշ դիմել է մաքրուհիների՝ խնդրելով՝ բնակարանը մաքրեն, որից հետո էլ բացահայտվել է այս դեպքը: Իսկ թե որտեղից դատավորին այդքան ոսկի, արդյոք մահացած դատավորինն է եղել, թե այլ անձի, որը հայտնվել է դատավորի տանը, այժմ պարզում են իրավապահները: Փաստ է մեկ բան. դատավորը մահացած է , իսկ նրա բնակարանից հայտնաբերվել են 12,5կգ քաշով ոսկյա ձուլակտորներ: Նրա անունը չենք հրապարակում՝ մահացած մարդուն հանրային պարսավանքի չենթարկելու համար: Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ քննչական, վարութային գործողությունների արդյունքում Երեւան քաղաքի երկու բնակչուհիներ վարույթն իրականացնող մարմին են ներկայացրել տարբեր վայրերում առանձին-առանձին թաքցված՝ մի դեպքում՝ 6 կիլոգրամ 860 գրամ քաշով, մյուս դեպքում՝ 5 կիլոգրամ 652 գրամ քաշով ամբողջական եւ մասնատված ենթադրաբար ոսկյա ձուլակտորներ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔԱՂԱՔԱՑԻ ՉԷ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը բավարարել է գործարար Ռուբեն Վարդանյանի՝ ՌԴ քաղաքացիությունից դուրս գալու դիմումը: Իրավական տեղեկատվության պաշտոնական պորտալում հրապարակված փաստաթղթում ասվում է. «Բավարարել հետեւյալ անձի՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիությունից դուրս գալու մասին դիմումը՝ Ռուբեն Կառլենի Վարդանյան (ծնվ. 1968 թվականի մայիսի 25-ին Հայաստանում)»: Հիշեցնենք, որ սեպտեմբերին Ռուբեն Վարդանյանը հայտնել է Ռուսաստանի քաղաքացիությունից հրաժարվելու եւ Արցախ տեղափոխվելու մտադրության մասին: Նշենք, որ նա այժմ Արցախի պետնախարարն է:

ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ

Ռուսաստանի Դաշնություն կատարած պաշտոնական այցի շրջանակում մերձմոկսովյան Նովո-Օգորյովո նստավայրում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը:

ՀՀ վարչապետի՝ ՌԴ կատարած պաշտոնական այցի շրջանակում երկու երկրների միջեւ ստորագրվել են հետեւյալ փաստաթղթերը.

- «Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության եւ Ռուսաստանի Դաշնության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միջեւ սոցիալ-աշխատանքային ոլորտում համագործակցության մասին» հուշագիր,
- «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության եւ Ռուսաստանի Դաշնության դատական կարգադրիչների դաշնային ծառայության միջեւ 2022-2023թթ.» համագործակցության ծրագիր,
- «Էներգետիկական եւ ոչ էներգետիկական նախագծերի բնագավառում հայ-ռուսական համագործակցության համալիր ծրագիր»,
- «Հայաստանի Հանրապետության սննդի անվտանգության տեսչական մարմնի եւ Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական եւ բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության միջեւ բույսերի կարանտինի ոլորտում տեղեկատվական համակարգերի ինտեգրմանն անցնելու վերաբերյալ» արձանագրություն,
- «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջեւ 2022-2025թթ. մշակույթի ոլորտում համագործակցության մասին» ծրագիր,
- «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության եւ Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության միջեւ 2022-2023թթ. համագործակցության ծրագիր»,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԿԱՐՈՂ ԵՆՔ ԳՆԱԼ ՈՒ ԱՆՑՆԵԼ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔՈՎ

«Ադրբեջանի կողմից, բնական է, շատ գերքայլեր չենք էլ ակնկալում»,- դեկտեմբերի 22-ի մամուլի ասուլիսում նշեց Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը՝ անդրադառնալով հարցին՝ եթե Ադրբեջանը, ամեն դեպքում, ՄԻԵԴ-ի կողմից միջանկյալ միջոց կիրառելուց հետո շարունակում է փակ պահել ճանապարհը, ինչ գործիքակազմ կա, ինչ է սպասվում:

«Ցավոք սրտի, գործիքակազմն ունի սահմանափակումներ, բայց զուտ եթե ֆորմալ առումով խոսենք, Եվրոպական կոնվենցիայի շրջանակներում հետեւյալ քայլերի հնարավորությունը կա. նախ՝ Նախարարների կոմիտեի հարթակը կա, որին ծանուցելու հնարավորություն ունի դատարանը իր կիրառած միջոցների մասին:

Նախարարների կոմիտեն, լինելով Եվրոպայի խորհրդի քաղաքական հիմնական մարմինը, հետեւում է նաեւ դատարանի վճիռների կատարման ընթացքին: Նախարարների կոմիտեն պետք է անհրաժեշտության դեպքում քննարկի, միջամտի այս հարցերին, հասկանա, թե քաղաքական առումով ինչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել, որպեսզի ավելի ուժեղացնի Ադրբեջանի նկատմամբ ճնշումը»:

Եղիշե Կիրակոսյանը նկատեց, որ նման որոշումներից հետո Հայաստանը պետք է լուրջ աշխատանք տանի դիվանագիտական ոլորտում. «Այսպիսի որոշումների արդյունավետությունը կախված է նաեւ մեր հետագա ակտիվ քայլերից, դիվանագիտական ու քաղաքական աշխատանքից»:

Լրագրողի նկատեց, որ Հայաստանը երկու պահանջ էր ներկայացրել՝ ապաշրջափակել Լաչինի միջանցքը եւ ապահովել կարիք ունեցողների տեղաշարժը: Ըստ էության, ստացվում է, որ ՄԻԵԴ-ը միայն երկրորդ պահանջն է բավարարել. կարելի՞ է անել եզրակացություն, որ ՄԻԵԴ-ն իսկապես Ադրբեջանին հստակ ցուցում չի տվել բացել, ապաշրջափակել Լաչինի միջանցքը:

Ի պատասխան՝ Եղիշե Կիրակոսյանն ասաց. «Եվրոպական դատարանի կողմից նման ձեւակերպում տալն ունի պատճառներ: Մենք, իհարկե, պահանջել էինք ապաշրջափակել ճանապարհը, փորձել էինք հնարավոր մաքսիմալ պահանջը դնել դատարանի առջեւ՝ հիմնավորելով դրա անհրաժեշտությունը, բայց դատարանն ունի որոշակի սահմանափակվածություններ: Այսինքն՝ դատարանի՝ միջանկյալ միջոց կիրառելու շրջանակն իր նախադեպային իրավունքի տրամաբանության տակ սահմանափակված է կոնվենցիայի 2-րդ հոդվածով՝ կյանքի իրավունքը պաշտպանող, 3-րդ հոդվածով՝ անմարդկային, դաժան, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելք, բացառիկ դեպքերում՝ 8-րդ հոդվածով՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիություն, որոնցով պաշտպանող իրավունքների համար, երբ կա անդառնալի վնասի ռիսկ, այդ պարագայում դատարանում կիրառում է միայն այս միջոցը: Այսինքն՝ դատարանից ակնկալել, որ միայն ասելու էր՝ բացել ընդհանրապես, սխալ կլիներ. դատարանը երբեք այդպիս բան չէր ասի, իր ցանկացած գործողություն պետք է կապեր կոնկրետ իրավունքի հետ: Նույնիսկ եթե մենք դատարանից ստացել ենք սա, արդեն բավականին մեծ քայլ է»:

Ե. Կիրակոսյանը նաեւ նշեց, որ եթե հարցը շարունակեն բարձրացնել Արդարադատության միջազգային դատարանում, մի քիչ ավելի լայն միջոց ստանալու հնարավորություն կա. հիմա քննարկվում է այդ հարցը:

Նա տեղեկացրեց, որ ՄԻԵԴ-ում իրենք բարձրացրել են նաեւ հարցը, որ ադրբեջանցի «բնապահպանների» շարքերում կան զինվորականներ. նրանցից մեկը անգամ լուսանկարվել է Ռամիլ Սաֆարովի հետ, ինչն ինքնին վտանգավոր կամ մտահոգիչ է. «Պարենային անվտանգության հատվածը եւս ներկայացրել ենք: Շեշտը դրված է եղել հատկապես դեղորայքային խնդիրների վրա: Մենք երկու ուղղությամբ ենք աշխատում. մենք ապացույցներ ենք ներկայացնում դատարանին, միաժամանակ փորձում ենք մաքսիմալ նվազեցնել Ադրբեջանի կողմից իրականացվող մանիպուլյացիաների էֆեկտը դատարանի վրա»:

Հարցին, թե ՄԻԵԴ-ի որոշումը հնարավորություն տալիս է արդյոք սննդամթերք ու պարեն ուղարկել Արցախ, Կիրակոսյանը պատասխանեց. «ՄԻԵԴ որոշումը հնարավորություն է տալիս մեկնաբանություններ անելու: Այնտեղ լայն է ձեւակերպված, եւ պարտադիր չէ, որ մենք սահմանափակվենք միայն հիվանդներով եւ ճանապարհին մնացողներով, որովհետեւ այն մարդիկ, որ գնում են, հետո անհրաժեշտ է լինելու նորից գնալ-գալ: Շատ կարեւոր է, որ ՄԻԵԴ որոշման մեջ նշված է նոյեմբերի 9-ի հայտարարության մասին, իսկ այդ հայտարարությունում հստակ նշված է Լաչինի միջանցքով մարդկանց բեռների, մեքենաների ազատ տեղաշարժն ապահովելու մասին: Պատահական չէ, որ դատարանը մեջբերում է այդ հայտարարությունը: Այսինքն՝ սա նշանակում է, որ, այո, մենք հիմա կարող ենք վեր կենալ, գնալ ու անցնել Լաչինի միջանցքով»:

Հիշեցնենք՝ Եվրոպական դատարանը բավարարել է Հայաստանի ներկայացրած պահանջը եւ միջանկյալ միջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է ՊՈՏԵՆՑԻԱԼԸ

«Հայաստանն օգտագործում է իր ողջ կարողությունները, աշխատում է, որ հնարավորինս արագ Լաչինի միջանցքը բացվի»,- վստահեցրեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը ԱԺ-ում լրագրողների հետ ճեպազրույցում: «Հայաստանն իր ամբողջ կարողություններն օգտագործում է, որպեսզի կարողանանք օգտագործել բոլոր այն հնարավոր գործիքները, որոնք առկա են, որպեսզի Լաչինի միջանցքը վերադառնա իր բնականոն հունին, այսինքն՝ աշխատի նոյեմբերի 9-ի հայտարարության համաձայն, որտեղ հստակ նշված է, որ ԼՂ կապը ՀՀ-ի հետ իրականացվում է Լաչինի միջանցքով, իրականացվում է անխոչընդոտ»,- վստահեցրեց Գրիգորյանը:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արեւմտյան Ամերիկայի հայկական կազմակերպությունները Արցախի շրջափակման վերաբերյալ համատեղ հայտարարությամբ են հանդես եկել: «Արցախի 120 հազար բնակչությունը Լաչինի միջանցքի փակման պատճառով մեկ շաբաթից ի վեր գտնվում է Ադրբեջանի կողմից հաստատված շրջափակման մեջ: Զրկված պարենի պաշարներից, դեղորայքից, ազատ տեղաշարժվելու իրավունքից՝ արցախահայությունը գտնվում է մարդասիրական լուրջ աղետի առջեւ: Ցավով արձանագրում ենք, որ Ռուսաստանի խաղաղապահների ճիգերը մինչ այժմ ցանկալի արդյունքներ չեն տվել՝ սանձելու ադրբեջանական կողմի սադրանքներն ու հակահայ գործողությունները: Միջազգային հանրությունը չպետք է անտարբեր մնա կամ բավարարվի դատապարտման պարզ կոչերով, որոնք անտեսվում են Բաքվի իշխանությունների կողմից: Ռուսաստանը, եվրոպական կառույցներն ու Ամերիկայի Միացյալ Նահանգները պարտավոր են օգնության հասնել Լեռնային Ղարաբաղում ապրող եւ գործող խաղաղ բնակչությանը: Մարդկային իրավունքների պաշտպանությունն առաջնահերթություն նկատող երկրները պետք է դիմեն գործնական քայլերի՝ տարաբնույթ մարդասիրական օգնություն հասցնելու համար ճմեռային եղանակային պայմաններում տառապող ժողովրդին:

ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ

«Ռուս խաղաղապահները Լեռնային Ղարաբաղում գործում են ստորագրված համաձայնագրերի համաձայն»,- ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը՝ մեկնաբանելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը, թե զորախումբը չի կատարում Լաչինի միջանցքի վերահսկողության իր պարտավորությունները: Այս մասին հաղորդում է ՌԻԱ Նովոստին: «Ռուս խաղաղապահներն անում են հնարավոր ամեն ինչ՝ ապահովելու կարգ ու հանգստություն այն տարածքներում, որտեղ նրանք աշխատում են: Եվ գործում են՝ բացառապես փաստաթղթերի ոգուն եւ տառին համապատասխան, որոնք ստորագրվել են երկրների միջեւ»,- ասել է Կրեմլի խոսնակը: Նա ընդգծել է, որ Մոսկվան կշարունակի այդ հարցը քննարկել հայ դաշնակիցների հետ:

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ՝ 93 ՀԱԶԱՐ 250 ԴՐԱՄԻ ԴԻՄԱՑ

ՀՀ ՊՆ N զորամասի պայմանագրային զինծառայողը՝ ավագ սերժանտի զինվորական կոչումով, 2022 թվականի հունվարին «Օդնոկլասնիկի» սոցիալական ցանցի միջոցով ծանոթացել է օտարերկրյա հատուկ ծառայությունների աշխատակցի հետ, ապա հավատարմագրվել է վերջինիս կողմից եւ համացանցային «Վոթսափ» հավելվածի միջոցով 2022 թվականի հունվարից մինչեւ 2022 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում կապի մեջ է գտնվել ադրբեջանական հատուկ ծառայությունների վերը նշված ներկայացուցչի հետ:

Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում իրականացված նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ այդ ընթացքում պայմանագրային զինծառայողը օտարերկրյա հատուկ ծառայությունների աշխատակցից ընդունել է վարձատրության դիմաց Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, տարածքային անձեռնմխելիությանը եւ արտաքին անվտանգությանն ի վնաս օգտագործելու համար ծառայության բերումով իրեն հայտնի պետական, ծառայողական գաղտնիք հանդիսացող, ինչպես նաեւ ռազմական բնույթի այլ տեղեկություններ հավաքելու եւ հանձնելու վերաբերյալ առաջարկը:

Նույն ժամանակահատվածում նշված պայմանագրային զինծառայողը հանձնելու նպատակով հավաքել եւ համացանցային կապի ընթացքում 2022 թվականի ապրիլին ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակցին է հանձնել պետական գաղտնիք կազմող տեղեկություններ: Վերջինս փոխանցել է իր ծառայության զորամասի պահպանության տեղամասում գտնվող N մարտական հենակետի՝ համացանցային տեղորոշման հնարավորություն ընձեռող ծրագրի կիրառմամբ կատարված եւ հենակետի տեղակայման հստակ կոորդինատները բացահայտող լուսանկարը, մարտական հենակետերի միջդիրքային հեռավորության վերաբերյալ ձեռագիր սխեման, որոնց դիմաց՝որպես վարձատրություն համապատասխանաբար 24 հազար եւ 21 հազար 250 դրամ գումար:

Բացի այդ, 2022 թվականի մայիսի 17-20-ն ընկած ժամանակահատվածում ադրբեջանական հատուկ ծառայությունների վերը նշված ներկայացուցչի հանձնարարությամբ հավաքել եւ նրան է հանձնել պետական գաղտնիք կազմող տեղեկություններ՝ իր ծառայության զորամասի պահպանության շրջանում գտնվող մարտական դիրքերի անվանումների, գծալարային կապի անցկացման ուղիների, գումարտակի հրամանատարական դիտակետի տեղակայման, միջդիրքային հեռավորությունների եւ դրանց կահավորվածության վերաբերյալ տեղեկություններ պարունակող «Կապի կազմակերպման սխեմա»-ն, որի դիմաց, որպես վարձատրություն, ստացել է 48 հազար դրամ:

Այսպիսով, նշված պայմանագրային զինծառայողը հնարավորություն է ստացել, չբացահայտելով օտարերկրյա հատուկ ծառայությունների օգտին աշխատելու փաստը, հավաքել եւ վարձատրության դիմաց վերջիններիս հանձնել պետական, ծառայողական գաղտնիք կազմող, ռազմական բնագավառի այլ տեղեկություններ հանդիսացող տվյալներ, որով հակառակորդին ընձեռել է իրական հնարավորություն՝հավանական մարտական գործողությունների պլանավորման ընթացքում կատարելու ուժերի եւ միջոցների ճշգրիտ հաշվարկներ, որոշել տարբեր հատվածներում իր կողմից խնդիրների կատարմանն ընդգրկվող ուժերի եւ միջոցների քանակը, տեղակայումները, ինչպես նաեւ կանխորոշել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորամասերից մեկի կողմից իր առջեւ դրված մարտական խնդիրների բնույթը, իրականացվելիք խնդիրների հնարավոր ծավալները, այդպիսով խոչընդոտել է ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումների առջեւ դրված խնդիրների պատշաճ իրականացմանը. լրտեսության, ռազմական բնագավառում պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկություններ հավաքելու եւ հանձնելու, ինչպես նաեւ թշնամական գործունեություն իրականացնելու համար օտարերկրյա կազմակերպության ներկայացուցչին այլ օգնություն ցույց տալու եղանակներով ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության կատարել է պետական դավաճանություն:

Նշված հանցանքը կատարելու համար հսկող դատախազը որոշում է կայացրել՝ պայմանագրային զինծառայողի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: Նրան մեղադրանք է ներկայացվել. Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ՝ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ 2022 թվականի դեկտեմբերի 22-ին հսկող դատախազի որոշմամբ հաստատվել է մեղադրական եզրակացությունը, քրեական վարույթի նյութերը հանձնվել են Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

ԼՈՒՐԵՐ

ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացվում են քննչական եւ վարութային գործողություններ՝ 2022 թվականի դեկտեմբերի 21-ին Երեւան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանում տեղի ունեցած ավազակության դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ: Նախնական տվյալներով՝նույն օրը՝ ժամը 02:30-ի սահմաններում, ենթադրյալ հանցագործությունը կատարած անձը, կոտրելով Երեւան քաղաքի Նոր Արեշ 22-րդ փողոցում գտնվող տներից մեկի մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել այնտեղ, հարձակվել նշված տանը միայնակ ապրող 75-ամյա բնակչի վրա, հարվածներ հասցրել վերջինիս մարմնի տարբեր հատվածներին, դանակի սպառնալիքով հափշտակել 1.000.000 ՀՀ դրամ եւ դիմել փախուստի: Նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի զննություն, վերցվել են արնանման հետքեր, հարցաքննվել են մի շարք անձինք, ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնին տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ քննչական հանձնարարություն: Նշանակվել են դատագենետիկական եւ դատաբժշկական փորձաքննություններ: Նախաքննությունը շարունակվում է: Միջոցներ են ձեռնարկվում՝ առերեւույթ հանցագործությունը կատարած անձին հայտնաբերելու, դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

70 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐԸ՝ ԱՂԲԱՄԱՆՈՒՄ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ օրերս ուշագրավ դեպք է եղել Երեւան քաղաքում: 70 տարեկան տատիկը զանգահարել է իրավապահներին եւ հայտնել, որ Դավթաշեն վարչական շրջանի աղբամաներից մեկում սխալմամբ աղբի հետ թափել է իր 70 հազար դոլարը: Տատիկը իրավապահներին հստակ մատնանշել է, թե կոնկրետ որ փողոցի որ վայրում է գցել աղբը: Իրավապահները կնոջ ահազանգին ընթացք են տվել, գնացել են նրա բնակարան, զրուցել են նրա հետ, նրա այդ հայտարարությանը խիստ կասկածանքով են վերաբերվել, սակայն զբաղվել են կնոջ ահազանգով:

Ավելի ուշ ստուգել են Դավիթաշեն վարչական շրջանի աղբամանը եւ տեսել են, որ այնտեղ գումար չկա: Որոշ ժամանակ անց ստուգվել են աղբամանի տարածքում գտնվող տեսախցիկները: Տեսախցիկների ստուգման ընթացքում նկատել են մի տղամարդու, որը մոտեցել է աղբամանին եւ փնտրել է ուտելիք եւ հագուստ, որից հետո աղբամանից հանել է մի տոպրակ եւ հեռացել: Ոստիկանություն դիմած տատիկը հետաքննիչներին հայտնել է, որ հենց այդ տոպրակի մեջ էլ գտնվել է իր 70 հազար դոլարը: Ոստիկանները գտել են տղամարդուն եւ նրա բնակարանից հայտնաբերել են 70 հազար դոլարը: Իսկ թե 70 տարեկան տատիկին որտեղից այդ գումարը, միգուցե կպարզեն իրավապահները:

ԿԱՇԱՌՔ

ԿԵՂԾ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐ ԵՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ

COVID-19-ի դեմ պատվաստված լինելու մասին կեղծ սերտիֆիկատներ կազմած եւ ակնհայտ աղօրինի անգործության համար կաշառք ստացած «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Լ.Մ.-ի, նրան օժանդակած նույն բուժհաստատության բուժքույր Օ.Կ-ի, կաշառքի միջնորդությունը ստանձնած Հ.Գ.-ի, կաշառք տվող Ք.Ք.-ի եւ պատշոնեական կեղծիք կատարելուն դրդող Ս.Թ.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը 2022 թվականի դեկտեմբերի 20-ին հսկող դատախազի կողմից հաստատվել եւ վարույթի նյութերի հետ միասին հանձնվել է Հակակոռուպցիոն դատարան:

Հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստման գործընթացում լիազորություններ ունեցող «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրենը 2021 թվականին մի շարք քաղաքացիներից, այլ անձանց միջնորդությամբ, որպես կաշառք ստացել է տարբեր չափերի գումար, ընդունել կաշառք տալու առաջարկներ, ինչպես նաեւ քաղաքացիների դրդմամբ կատարել է նաեւ պաշտոնեական կեղծիք: Մասնավորապես՝ շահադիտական նպատակով քաղաքացիների՝ կորոնավիրուսային հիվանդության դեմ իբր պատվաստված լինելու վերաբերյալ կեղծ տեղեկությունները նույն բժշկական հաստատության այլ աշխատակցի օժանդակությամբ լրացրել է Առողջապահության նախարարության կողմից սահմանված ձեւաթղթում, ինչպես նաեւ մուտքագրել է պաշտոնական «Արմեդ» համակարգ՝ կազմելով պատվաստված լինելու վերաբերյալ կեղծ սերտիֆիկատ:

Գլխավոր դատախազությունը հորդորում է Հայաստանի Հանրապետությունում գործող բժշկական հաստատությունների աշխատակիցներին եւ քաղաքացիներին զերծ մնալ նման հանցավոր գործունեությունից՝ հաշվի առնելով, որ դրա արդյունքում իրական վտանգ է ստեղծվում անձանց կյանքի եւ առողջության համար՝ որոշ դեպքերում հանգեցնելով անդառնալի հետեւանքների:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 21-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 50 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏ

ՀՀ ԱՍՀՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից ArmLur.am-ին հայտնեցին, որ 2023թ. հունվարի 1-ից մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանվում են.

Մինչեւ 2023 թվականի հունվարի 1-ը ծնված երեխային խնամելու կապակցությամբ՝

-խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար՝ 31,600 դրամ (գործող 28,600 դրամի փոխարեն),

-գյուղաբնակ չաշխատող ծնողի համար՝31,600 դրամ (գործող՝28,600 դրամի փոխարեն),

-խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնողի համար՝ 63,200 դրամ (գործող՝ 57,200 դրամի փոխարեն):

2023 թվականի հունվարի 1-ից հետո ծնված երեխային խնամելու կապակցությամբ՝

-խնամքի արձակուրդում չգտնվող ծնողի համար՝ 31,600 դրամ (գործող՝ 28,600 դրամի փոխարեն),

-խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար՝ 37,500 դրամ (գործող՝ 28,600 դրամի փոխարեն),

-խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնողի համար՝ 69,100 դրամ (գործող՝ 57,200 դրամի փոխարեն):

Acba digital ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանում առաջինը թվային քարտեր թողարկած «Ակբա» բանկը հնարավորություն է ընձեռում acba digital-ի միջոցով 24/7 ռեժիմով մինչեւ 28.02.2023թ. անվճար պատվիրել մեկ Visa Digital քարտ:

Բացի օնլայն վճարումներից, բանկի թվային քարտերը հնարավոր է օգտագործել նաեւ իրական միջավայրում՝ վերջինս կցելով Apple Pay եւ Google Pay դրամապանակներին:

«Ակբա»-ն նաեւ առաջինն է ու դեռեւս միակն է Հայաստանում, որ հաճախորդներին հնարավորություն է տալիս փոխել թվային քարտի դիզայնը՝ ընտրելով acba digital համակարգում առաջարկվող ավելի քան 30 դիզայններից որեւէ մեկը:

Acba digital հավելվածը հնարավոր է ներբեռնել՝ այցելելով բանկի պաշտոնական կայքէջ:

Ավելին կարող եք իմանալ՝ այցելելով բանկի պաշտոնական կայքէջ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԱՄԵՆԱՄՅԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ 2023-ԻՆ՝ ՄԵՎ ՃԱԳԱՐԻ ՏԱՐՈՒՄ

2023-ի խորհրդանիշը ջրային նապաստակն է. այս կենդանին բոլորիս խոստանում է փոփոխություններ: Հաջորդ տարի բոլորս կյանքի հանգիստ ու խաղաղ ընթացք չենք կարող ակնկալել: Փոփոխություններ են սպասվում կյանքի բոլոր ոլորտներում: Չպետք է մոռանանք մեր ինքնությունը եւ հայրենի հողում ապրելու վճռականությունը:

Ավանդույթը չխախտելով՝ «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է Հայաստանի իշխանական եւ քաղաքական գործիչների հորոսկոպը՝ քաղաքական ապագայի կանխատեսումներով:

Եւ այսպես.

ՀՀ վարչապետ
Նիկոլ Փաշինյան



Ճագարի տարում ծնված Փաշինյանի համար անձնապես հաջողակ տարի է խոստանում լինել 2023 թվականը: Բախտը էլի կլինի նրա կողքին, ֆինանսական հաջողությունների տեղատարափը կշարունակվի: Փափուկ եւ անհոգ կյանքը, այս կամ այն հարցի լուծման համար դիմելիության հոսքը կշարունակի շլացնել Ձեզ ու Ձեր մերձավորներին, սակայն գործնական կյանքում սթրեսները անխուսափելի կլինեն: Անհասկացվածությունը կշարունակի Ձեր հիմնական ուղեկիցը լինել ողջ տարվա ընթացքում. ժամանակ առ ժամանակ անհասկացվածություն կլինի ինչպես մերձ թիմակիցների, այնպես էլ արտաքին կենտրոնների հետ հարաբերություններում: Արկածախնդրությունը էլի կդրսեւորվի Ձեր կյանքում հաճախ, ինչի համար աստղերը հուշում են լինել առավել կայուն, պահպանել դիրքորոշումները, պահի տակ որոշումներ չկայացնել, չձգտել սեղմել, ճնշել որեւէ մեկին… Փոխարենը լավ կլինի գտնել այս կյանքում գոնե մեկ հուսալի, անփոփոխ, անդավաճան ընկեր…Եթե չի հաջողվի, հոգ չէ, կապրեք այսրոպեական ընկերներով, ինչպես անցած մոտ 5 տասնյակ տարիների ընթացքում: Այնպես որ, հիշեք՝աստղերը հուշում են, բայց չեն պարտադրում:

ՀՀ նախագահ
Վահագն Խաչատուրյան



Խոզի տարում ծնված Վահագն Խաչատուրյանի համար 2023-ը խոստանում է գերազանց տարի լինել: Այս կենդանակերպի համար ֆինանսական առումով տարին շատ շահավետ կլինի՝ եկամուտների, ծպտյալ փոստային բիզնեսը զարգացնելու տեսանկյունից: Աշխատանքային գործունեությունը, որն իր մեջ ներառում է զերո պատասխանատվություն, իսկը Ձեզ համար է: Բոլորը ամեն բան մտածում եւ իրականացնում են Ձեր փոխարեն, մնում է՝ ինքներդ հոգաք գլխավոր հարցը՝ ինչպես շարունակել արքայավայել կյանքը կարիերայի ավարտից հետո: Դրա համար 2023 թվականին Ձեր նպատակը պետք է լինի ավելի շատ ներդրումներ կատարելը, քանի դեռ եկամուտները Ձեզ ֆինանսապես ապահով չեն դարձրել: Բայց ռիսկ, ամեն դեպքում, կա՝ հաշվի առնելով քաղաքական այն առաջնորդին, որի հրահանգները կատարում եք անվերապահորեն: Նա ցանկացած պահի կարող է հրահանգել գահընկեց անել Ձեզ՝ հաշվի առնելով, որ նախորդ կյանքում Դուք ի պաշտոնե օգնել եք գործարարներից մեկին Երեւանի սրտում շինության տեր դառնալ, ինչը ՀՀ գլխավոր դատախազի ուշադրության կենտրոնում է հայտնվել: Ամեն դեպքում, աստղերը հուշում են՝Ձեր չեզոք վերաբերմունքը եւ կայացված որոշումները չքննարկողի կեցվածքը կօգնեն երկարաձգել կառավարումը մինչեւ նոր, առավել հարմար թեկնածուի ի հայտ գալը: Վերջում հիշեք, որ աստղերը հուշում են, բայց չեն պարտադրում կատարել Փաշինյանի բոլոր հրահանգները:

ԱԺ նախագահ
Ալեն Սիմոնյան

Կապիկի տարում ծնված Ալեն Սիմոնյանի համար 2023-ը կարող է լինել հաջողակ եւ կայուն, բայց դրա համար պետք է մի քիչ պայքարել: Հնարավոր է՝ աշխատավայրում անսպասելի բաներ տեղի ունենան, բայց պետք է գիտակցել դրանց պատճառները, մաքրել սեփական թիմը ինքնահաստատման կարիք ունեցողներից եւ շրջապատվել այնպիսի մարդկանցով, որոնք իրապես Ձեզ հավատարիմ են, այլ ոչ թե Ձեր կողքին են իրենց կարիերայի առաջընթացի ապահովման համար: Իհարկե, սեփական թիմում Ձեր ոտքի տակը փորողների պակաս չկա, բայց պետք է հումորով վերաբերվել գործադրվող ջանքերին՝ իհարկե դասեր քաղելով ամեն փորձությունից: Չպետք է վեր-վեր թռնել ունեցած հաջողություններից, այլ դրանք ծառայեցնել՝ ի բարօրություն բոլորի: Աստղերը հուշում են ընտանեկան հարաբերություններում լինել ընդգծված ազնիվ եւ փխրուն հարաբերությունները չբարդացնել: Հիշեք՝ ընտանիքն ամենակարեւոր ձեռքբերումն է կյանքում:

ՀՀ առաջին նախագահ
Լեւոն Տեր-Պետրոսյան



Ճագարի տարին աքաղաղների համար խոստանում է շատ վայրիվերումներ չանել. կյանքի ռիթմն ու ակտիվության չափաբաժինը կպահպանվի նաեւ 2023 թվականին: Ձեր իմաստուն խորհուրդները լսելու կարիք, իհարկե, միշտ կա, բայց միասնականության Ձեր ձգտումները՝ առավելապաշտական նկրտումներով, դատապարտված են էլի ձախողման: Աստղերը հուշում են հետեւել Ձեր առողջությանը, շարունակել թոռների կրթության վրա գործադրվող ջանքերը:

ՀՀ երկրորդ նախագահ
Ռոբերտ Քոչարյան



Ձիու տարում ծնված Ռոբերտ Քոչարյանի համար կյանքի հետաքրքրությունները շարունակելու են նույնը մնալ, ինչ 2022 թվականին. սեփական առողջությունը, սպորտով զբաղվելու անշեղ գործելաոճը եւ հայրենիքի համար մտահոգությունները, որոնք դրսեւորվում են տարբեր կերպ: 2023-ի կանխատեսումներն ասում են, որ ձիերը հիանալի առողջություն կունենան տարվա ընթացքում, սակայն նրանց էմոցիոնալ առողջությունը խնդիրների առաջ կկանգնի: Հարաբերությունները կբախվեն բազմաթիվ մարտահրավերների: Պետք է ջանքեր գործադրել, որպեսզի հեռացվեն խոչընդոտները, եւ հարաբերությունները դառնան ավելի կայուն եւ հաճելի: Դուք վերջնականապես հասկացաք, որ քաղաքական նորելուկ՝ թիթեռնիկ գործիչների հետ, որոնք հավակնում են կուսակցապետ լինել, չարժե ճանապարհ գնալ, եւ նրանցից օր առաջ ազատվելը Ձեզ ավելի կուժեղացնի: Շարունակե՛ք Ձեր հաստատուն կեցվածով առաջ գնալ, շատ ժամանակ անցկացնել ընտանիքի անդամների հետ. կայուն արժեքը ընտանիքն է: Աստղերը հուշում են այս տարում առավել ակտիվ լինել, քանի որ Ձեր պասիվությունը ակտիվացնում է անհայրենիք տեսակին:

ՀՀ երրորդ նախագահ
Սերժ Սարգսյան



Ձիու տարում ծնված Սերժ Սարգսյանի համար այս տարին խոստանում է առավել ակտիվ լինել: Մինչ այս Ձեր առավել ծածուկ գործելաոճը կփոխարինվի ավելի բացահայտ քայլերով: Ձեր կողքին կանգնած հաստատուն թիմակիցները կշարունակեն ոգեւորել Ձեզ՝ հասկանալու համար, որ Ձեր նկատմամբ ընկալումն ու պատկերացումներն են սխալ եղել անցյալում: Աստղերը հուշում են խոսել այս տարի եւ վերջապես բացատրել թեւավոր դարձած միտքը՝ «Նիկոլը ճիշտ էր, ես սխալվեցի»… Ի՞նչ էր դա նշանակում: Իհարկե, չմոռանանք, որ աստղերը հուշում են, բայց երբեք չեն պարտադրում: Հետեւե՛ք Ձեր առողջությանը:

Վերջում հիշեցնենք, որ աստղերը հուշում են, բայց չեն պարտադրում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 15-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Արարատի մարզ, համայնք Վերին Դվին, Գ. Տամրազովի փողոց, 13 հասցեում գտնվող 238,92 ք.մ. բնակելի տուն, 49,67 ք.մ. անասնաշենք, 48,06 ք.մ. ծածկ եւ 0,17863 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 19200000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 09.01.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 09.02.2023թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- ք. Երեւան, Աջափնյակ, Հ. Մարգարյան փողոց, 29/2 շենք, 25 հասցեում գտնվող 51,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11364076 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 09.01.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 09.02.2023թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

«ԱԿԲԱ» բանկ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) եւ «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ընկերությունը մեկնարկում են նոր համագործակցություն՝ Հայաստանի ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի ներդրումների արագացմանը նպաստելու, ինչպես նաեւ երկրում աշխատատեղերի ստեղծմանն ու տնտեսական աճին օժանդակելու նպատակով:

«Ամունդի-Ակբա»-ն ամբողջ աշխարհում առաջին կենսաթոշակային ֆոնդի կառավարիչն է, որ միացել է IFC-ի «Համագործակցության մասին գլխավոր համաձայնագրին»:

«Համագործակցության մասին գլխավոր համաձայնագիրն» ապահովում է զարգացող երկներում բազմաթիվ վարկատուների կողմից միասնական փաթեթով ընկերություններին ֆինանսավորում տրամադրելու պարզեցված եղանակ: Ըստ այս համաձայնագրի եւ կենսաթոշակային ֆոնդերի մասին օրենքի՝ երկու կազմակերպությունները կգնահատեն Հայաստանի ենթակառուցվածքներում խոշոր ծրագրերի ֆինանսավորման իրագործելիությունը եւ հնարավորությունները:

Համաձայնագիրն ընդունող վարկատուներն օգտվում են IFC-ի վարկերի սինդիկացման հարթակից, որը զարգացող շուկաներում մասնավոր ընկերությունների համար ավելի քան 100 միլիարդ դոլար է ներգրավել, ինչպես նաեւ գործարքների կառուցվածքի սահմանման, պատշաճ ուսումնասիրության, բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի կառավարման եւ ազդեցության չափորոշման ու գնահատման ոլորտում IFC-ի փորձառությունից: IFC-ն մասնավոր կապիտալի մոբիլիզացման մասշտաբներն ընդլայնելու նպատակ ունի՝ ձեւավորվող շուկաներում զարգացումն արագացնելու եւ կլիմայի մեղմմանը ու հարմարվողականությանն օժանդակելու համար: «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ»-ը՝ ավելի քան 700 մլն դոլար կառավարման ներքո ակտիվներով, հայաստանյան առաջատար կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչն է:

Այս համաձայնագիրը լրացնում է ֆրանսիական Ամունդիի եւ IFC-ի՝դեռեւս 2018թ.-ին մեկնարկած երկարաժամկետ համագործակցությունը, ըստ որի՝ վերջիններս հայտարարեցին զարգացող շուկաների վրա կենտրոնացած աշխարհի ամենամեծ նպատակային կանաչ պարտատոմսերի ֆոնդի՝Aշundi Planet Eշerging Green One-ի գործարկման մասին: Ամունդին այս գործընկերությանը խթանում է զարգացող շուկաների պարտքային գործիքներում իր ներդրումային հնարավորություններով ու ESG (բնապահպանական, սոցիալական եւ կառավարչական) համապատասխանության հանձնառությամբ, իսկ IFC-ն՝ զարգացող երկրներում իր եզակի տարածմամբ:

Երկու ընկերությունները միավորել են ուժերը ներդրումային նորարարությունների, կանոնավոր կրթության եւ գիտելիքի փոխանցման ծրագրերի միջոցով կապիտալը զարգացող շուկաներ ուղղելու նպատակով, որոնք նախատեսված են թե՛ թողարկողների, թե՛ ներդրողների համար:

«Մեր կողմից կառավարվող ֆոնդերի շահառուների համար արժանապատիվ կենսաթոշակ ապահովելը մեր հիմնական առաքելությունն է մնում: Միեւույն ժամանակ, մեր ներդրումների միջոցով Հայաստանի տնտեսության զարգացմանը նպաստելը մեզ համար կարեւոր է: IFC -ի՝ ամենահեղինակավոր միջազգային հաստատություններից մեկի հետ սույն համաձայնագիրը մեզ կօգնի իրագործել մեր նպատակը»,-նշել է «Ամունդի-Ակբա» ընկերության գործադիր տնօրեն Ժան Մազեջյանը:

«Կայուն ենթակառուցվածքն առանցքային է զարգացող շուկաներում մարտահրավերներին դիմագրավելու համար, ինչի պատճառով էլ Հայաստանի ենթակառուցվածքներին օժանդակելը IFC-ի առաքելության կարեւոր մասն է: «Ամունդի-Ակբա»-ին ողջունում ենք ներդրումային գործընկերների մեր հսկայական ցանցում: Կապիտալի մոբիլիզացմամբ մեր նպատակը Հայաստանի ժողովրդի կյանքի վրա մեր ֆինանսավորման դրական ազդեցության ընդլայնումն է»,-նշել է Հարավային Կովկասում IFC-ի տարածաշրջանային ղեկավար Իվանա Ֆերնանդես Դուարտեն:

IFC-ն «Համագործակցության մասին գլխավոր համաձայնագիրը» ստեղծել է 2008 թվականին համաշխարհային ներդրողների շրջանում ավելի մեծ համագործակցություն խթանելու եւ զարգացող երկրներում մասնավոր հատվածի ֆինանսավորման պակասը լրացնելու համար: Համաձայնագիրը սոցիալական, շրջակա միջավայրի վրա եւ տնտեսական դրական ազդեցություն ապահովելու համար առկա պատասխանատու կապիտալի ֆոնդն ընդլայնելու եւ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրագործմանն ու Կլիմայի մասին փարիզյան համաձայնագրի նպատակներին օգնելուն ուղղված IFC-ի աշխատանքի անկյունաքարն է: IFC-ի մասին IFC-ն Համաշխարհային բանկի խմբի անդամ է՝զարգացման խոշորագույն գլոբալ կառույց, որը կենտրոնացած է նոր ձեւավորվող շուկաներում մասնավոր հատվածի վրա: IFC-ն աշխատում է 100-ից ավելի երկրում՝ իր կապիտալը, փորձառությունը եւ ազդեցությունը գործածելով՝ զարգացող երկրներում շուկաներ եւ հնարավորություններ ստեղծելու համար: 2022թ. ֆինանսական տարվա ընթացքում IFC-ն ռեկորդային՝ 32.8 միլիարդ դոլար է պարտավորվել ներդնել զարգացող երկրների մասնավոր ընկերություններում եւ ֆինանսական կառույցներում՝ մասնավոր հատվածի ներուժն իրացնելով ծայրահեղ աղքատությանը վերջ դնելու եւ համընդհանուր բարգավաճումը խթանելու համար այն ժամանակ, երբ տնտեսությունները պայքարում են համաշխարհային խորացող ճգնաժամերի ազդեցությունների դեմ: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք www.ifc.org:

«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ»-ը հիմնադրվել է 2013թ.-ին Հայաստանում: Ընկերության 2 բաժնետերերն են Ամունդին (1,924 տրիլիոն եվրո կառավարման ներքո ակտիվներով Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ) եւ «Ակբա» բանկը (Հայաստանի խոշորագույն առեւտրային բանկերից մեկը, որի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայի ամենալիկվիդային՝ A հարթակում): «Ամունդի-Ակբա»-ն կառավարում է երեք պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդ՝ հիմնվելով Ամունդիի առաջադեմ փորձառության (նոու-հաու), ինչպես նաեւ մասնագիտական եւ տեխնոլոգիական աջակցության վրա:

Հայաստանի կայուն զարգացման գործում առանցքային դեր ստանձնելու համատեքստում՝ «Ամունդի-Ակբա»-ն ջանք չի խնայում երկրում ներդրումային միջավայր ձեւավորելու եւ Հայաստանի ապագայում ներդնելու հարցում՝ ելնելով կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների լավագույն շահերից:

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» թերթում 30.11.2022թ. տեղ գտած հրապարակումը՝ ՁՊՄԿ պոչամբարում իբր «պայթյունի» վերաբերյալ, ապատեղեկատվություն է եւ չի համապատասխանում իրականությանը: Պոչամբարի «պայթյուն» ՁՊՄԿ-ում երբեք տեղի չի ունեցել: Միշտ պատրաստ ենք տրամադրել իրական պատկերը, ինչը եւ անում ենք ստորեւ:

ՁՊՄԿ-ում տարիների ընթացքում մի քանի անգամ տեղի է ունեցել պոչատարից արտահոսքի դեպք: Վերջին անգամ նման դեպք գրանցվել է ավելի քան երկու ամիս առաջ՝ ս/թ-ի հոկտեմբերի 13-ին: Օպերատիվ գործողությունների արդյունքում աղտոտման տարածումը կանխվել է: Արտահոսքի մասին տեղեկացվել են ՀՀ Սյունիքի մարզի Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ներկայացուցիչները:

Նախկինում (2017-2021) պոչատարից տեղի ունեցած վթարների քանակը հինգն են եղել, որոնց դեպքում աղտոտման է ենթարկվել Ողջի գետը, եւ հարուցվել է քրեական գործ (մեկ դեպքում):

Հարկ ենք համարում նշել, որ նման միջադեպերի խորքային պատճառը ՁՊՄԿ-ում տարիների ընթացքում կուտակված թե՛ ընթացակարգային, թե՛ տեխնիկական վերազինման անհրաժեշտության հետ կապված խնդիրն է:

ՁՊՄԿ նոր սեփականատեր «Գեոպրոմայնինգ» ընկերությունների խումբը 2021թ. հոկտեմբերից ստանձնել է ընկերության կառավարումը՝ հանձնառելով ՁՊՄԿ-ում առկա բնապահպանական, սոցիալական եւ կառավարչական խնդիրների աստիճանական բացահայտման եւ լուծման պարտավորություն:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՀՈԼԻՎՈՒԴ

ՀԱՅՏՆԻ Է ՕՍԿԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ամերիկյան կինոակադեմիան հրապարակել է «Օսկար» մրցանակին առաջադրված թեկնածուների ցանկը 10 անվանակարգերում:

«Լիամետրաժ վավերագրական ֆիլմ» անվանակարգում ընտրվել է 15 ֆիլմ: Դրանց թվում են կանադացի ռեժիսոր Դենիել Ռոերի «Նավալնի» ֆիլմը, Սայմոն Լերենգ Վիլմոնտի «Բեկորներից պատրաստված տունը» ֆիլմը՝ Ուկրաինայի արեւելքում գտնվող մանկատան մասին, ինչպես նաեւ Վենետիկի կինոփառատոնի դափնեկիր Լորա Պոյտրասի «Ամբողջ գեղեցկությունը եւ արյունահեղությունը» ֆիլմը: Բացի այդ, անվանակարգում ներկայացված են նաեւ ամերիկացի, հինդիկ եւ չինացի ռեժիսորների աշխատանքները:

«Լավագույն արտասահմանյան լիամետրաժ ֆիլմ» անվանակարգում նույնպես ընդգրկվել է 15 ֆիլմ Արգենտինայից, Ավստրիայից, Բելգիայից, Կամբոջայից, Դանիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Հնդկաստանից, Իռլանդիայից, Մեքսիկայից, Մարոկկոյից, Պակիստանից, Լեհաստանից, Շվեդիայից եւ Հարավային Կորեայից: Այս անվանակարգի համար հայտ էր ներկայացրել 92 երկիր: «Օսկարի» առաջադրման փուլում կինոակադեմիայի բոլոր ճյուղերի անդամները պետք է դիտեն ֆիլմերը եւ որոշեն մրցանակի հավակնորդներին:

Բացի այդ, ներկայացվել են թեկնածուները հետեւյալ անվանակարգերում՝ «Կարճամետրաժ վավերագրական ֆիլմ», «Կարճամետրաժ անիմացիոն ֆիլմ», «Դիմահարդարում եւ սանրվածք», «Երաժշտություն», «Վիզուալ էֆեկտներ» եւ այլն: «Օսկար» 95-րդ մրցանակաբաշխության արարողությունը տեղի կունենա 2023 թ.-ի մարտի 12-ին Լոս Անջելեսում, իսկ մրցանակին առաջադրվողների անունները կհայտարարվեն հունվարի 24-ին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Գ.

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում, վերջինս իրականացնելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող՝ 268482880 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ շարժական գույքերի, մասնավորապես՝ հաստոցների, սարքերի, սարքավորումների եւ այլ ապրանքանյութական արժեքների աճուրդը, ինչպես նաեւ՝ նույն հարթակում, Կազմակերպիչ «Բի Էս Թի» ՍՊԸ-ն իրականացնելու է ստորեւ նշված անշարժ գույքերի բաց աճուրդ: Շարժական գույքը եւ ներկայացված առաջին տասը անվանում անշարժ գույքը սակարկվելու են մեկ համալիրով, իսկ թվով տասնմեկերրորդ լոտը սակարկվելու է որպես առանձին միավոր: Սակարկություններն իրականացվելու են համապատասխան փուլերով՝ մեկ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ, յուրաքանչյուր յոթերրորդ օրը, «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա, 19-րդ փողոց, 5 հասցեում գտնվող 0,05 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 3600000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա, 19-րդ փողոց, 4 հասցեում գտնվող 2 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 75360000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա, 19-րդ փողոց, 3 հասցեում գտնվող 0,1 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 4850000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա, 19-րդ փողոց, 2 հասցեում գտնվող 0,1 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 4850000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա, 19-րդ փողոց, 1 հասցեում գտնվող 0,1 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 4850000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա, 18 փողոց, 21 հասցեում գտնվող 1,96149 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25400000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա հասցեում գտնվող 1,5 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 6500000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա հասցեում գտնվող 3,7 հա արոտավայր: Լոտի մեկնարկային գինը՝ 6900000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա, 18-րդ փողոց, 22 հասցեում գտնվող 106,38 ք.մ. արդյունաբերական օբյեկտ, 89,25 ք.մ. արդյունաբերական օբյեկտներ, 60,72 ք.մ. հանք անցում, 56,62 ք.մ. հանք անցում եւ 0,24334 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 59760000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Շորժա, 18-րդ փողոց, 23 հասցեում գտնվող 2092,49 ք.մ. գլխավոր մասնաշենք, 193,54 ք.մ. հանք անցում, 461,85 ք.մ. հանքանյութի պահեստ, 12,41 ք.մ. էլ-ենթակայան, 248,95 ք.մ.արհեստանոց, 15,69 ք.մ. շինություն, 29,88 ք.մ. պահեստ, 40,53 ք.մ. ենթակայանի շենք, 58,67 ք.մ. արդյունաբերական օբյեկտ, 41,36 ք.մ. հանք անցում, 98,85 ք.մ. նավթամթերքի պահեստ, 7,86 ք.մ. հանք անցում եւ 3,66365 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 4930000000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 2-1 հասցեում գտնվող 498,2 ք.մ. պահեստ, 1070,6 ք.մ. պահեստ, 1057 ք.մ. կարբիդի արտադրամաս, 2022,5 ք.մ. կարբիդի պահեստ, 587 ք.մ. պահեստ, 2343,5 ք.մ. պահեստ, 695,8 ք.մ. արտադրամաս, 1449,14 ք.մ. տնտեսական մասնաշենք, 274,7 ք.մ. ենթակայան, 31,7 ք.մ. գետնահոր, 212 ք.մ. ենթակայան, 31,7 ք.մ. գետնահոր, 2072,1 ք.մ. արտադրամաս, 62 ք.մ. օժանդակ, 224 ք.մ. բեռնաթափման հարթակ, 139 ք.մ. կենցաղային մասնաշենք, 8,8 ք.մ. արտադրամաս, 261,1 ք.մ.արհեստանոց, 908,7 ք.մ. արտադրամաս, 4176 ք.մ. հարթակ, 440,8 ք.մ. ծածկ, 120 ք.մ. հարթակ, 684 ք.մ. ծածկ, 2028 ք.մ. ծածկ, 159,12 ք.մ. ծածկ եւ 8,04724 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 682000000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի առաջին փուլը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 09.01.2023թ.-ին, ժ. 12:00-ին: Աճուրդի ավարտը՝ 03.07.2023թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՏՈՄՍԵՐԸ՝ ՄԻՆՉԵՎ ԱՊՐԻԼԻ 1–Ը

Դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրին միացած թանգարանները, թատրոնները եւ համերգային կազմակերպություններն աշակերտներին շարունակելու են ընդունել 2022 թվականի տոմսերով մինչեւ 2023 թվականի ապրիլի 1-ը:

Ինչպես հայտնում են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, 2023 թվականի համար նախատեսված տոմսերի տրամադրման վերաբերյալ կտեղեկացվի լրացուցիչ:

Նախարարությունը հիշեցնում է, որ ծրագիրը նախատեսված է պետական հանրակրթական դպրոցների 1-12-րդ դասարանների աշակերտների եւ նրանց ուղեկցող ուսուցիչների համար (յուրաքանչյուր 10 աշակերտի համար՝ մեկ ուղեկցող ուսուցիչ):

Ծրագրից օգտվելու նախապայմաններն են.

յուրաքանչյուր աշակերտ ուսումնական տարվա ընթացքում հնարավորություն ունի մեկ անգամ անվճար այցելելու մշակութային երեք հաստատություն՝ թանգարան, թատրոն, համերգասրահ: Մուտքի տոմսը բաղկացած է երեք մասից՝ համապատասխանաբար ներկայացնելով թանգարան, թատրոն եւ համերգասրահ բաժինները:

Մշակութային հաստատության ընտրությունը կատարում են աշակերտները, խմբային այցելություններին դեպքում՝ առաջնորդվում ուսուցչի առաջարկությամբ:

Այցելությունները պետք է նախապես ամրագրվեն եւ համաձայնեցվեն մշակութային կազմակերպությունների հետ:

Թատերական եւ համերգային կազմակերպություններն իրավունք ունի սահմանելու եւ առաջարկելու համապատասխան քանակությամբ տեղեր:

Թանգարաններում բաժանորդային տոմսն ապահովում է միայն ընդհանուր ցուցադրության մուտքը. ուղեկցությամբ շրջայցերը վճարովի են եւ պետք է նախապես համաձայնեցվեն թանգարանի հետ:

Բաժանորդային համակարգը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտներին, անկախ սոցիալական կարգավիճակից, բնակության վայրից եւ մշակութային հաստատության հասանելիությունից, մասնակցելու իր համայնքի կամ ՀՀ ցանկացած այլ քաղաքի մշակութային միջոցառմանը:

Ծրագիրը երաշխավորում է դպրոցահասակների մշակութային կրթության իրավունքի իրացման նվազագույն հնարավորությունը՝ միաժամանակ մշակութային հաստատություններին ընձեռելով նոր այցելուներ ունենալու եւ մշակութային այլ օջախների հետ հավասար պայմաններում մրցակցելու հնարավորություն:

● *Դեկտեմբերի 25-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Թիվ 23» ստենդափը: Տոմսերի արժեքը՝4000-8000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

Քնար Մանուկյան

«Ես խոնարհվում եմ ու ներողություն եմ խնդրում հայրենիքի համար զոհված մեր հերոս տղերքից: Խոնարհվում եմ նրանց հերոս մայրերի, բալիկների, կանանց առաջ: Ցավոք, չունեմ որեւէ մաղթանք, միայն ու միայն երազում եմ խաղաղ հայրենիքի, հզոր հայրենիքի, անվտանգ հայրենիքի ու հաղթանակած հայրենիքի մասին»:

Նաիրա Հովհաննիսյան

«Թող 2023 թվականը մեզ տա սեփական ցանկությունները մեր սեփական ձեռքերով իրականացնելու հնարավորություն: Թող անցնող տարվա հետ գնան բոլոր դժվարությունները, հիվանդությունները ու դժբախտությունները»:



Սեւակ Վարդումյան

«2020-ից ի վեր հայ ժողովրդի համար Ամանորը ոչ թե տոն, այլ տարվա հերթական պտույտն է: Ծանր ժամանակներ ենք ապրում, ականատեսը լինում պետականության մաս-մաս ծվատման ու անդառնալի կորուստների, ու այս ամենի ֆոնին այնքան բարդ է լավի կամ դրականի մասին խոսելը: Իսկապես իրատես պետք է լինել ու գիտակցել, որ միայն տքնաջան աշխատանքով կարող ենք պետությունը ոտքի հանել ու պահել, փայփայել կես բռաչափ դարձած երկիրը: Բայց, այնուամենայնիվ, մաղթենք, որ 2023-ին «ազատ շնչե Հայաստան, եւ շուրջ Մասիս մեր սարին փայլեին արտ-անդաստան...»:

Սյունէ Համբարձումյան

«Ժպիտ, սեր, ուրախություն, խաղաղություն բոլորին...»:

Ալվարդ Կոշկակարյան

«2023-ը հնարավորություն է ավելի լավը դառնալու: Ցանկանում եմ, որ տարին ամրապնդի ազատությունը, խաղաղությունը, ստեղծարարությունը... Թող այս լավ տարին իր հետ բարի լրահոս բերի: Շնորհավո՛ր Ամանոր»:

Ռոզա Պողոսյան

«Գալդ բարի՛, 2023 թվական, խաղաղությո՛ւն Հայոց աշխարհին: Շնորհավո՛ր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ»:

Հովսեփ Հովսեփյան

«2023 թվականը թող լինի խաղաղ երկնքի, մեր սահմանների ամրության, կենաց ոգու դիմակայության տարի»:

Ջեմմա Գեւորգյան

«Բոլորիս խաղաղություն, առողջություն, երջանկություն եւ մեծ սեր»:

Ոսկան Սարգսյան

«Նոր տարում Արցախում եւ Հայաստանի սահմաններին խաղաղություն թող լինի: Հայաստանի բնակիչներին եւ աշխարհի հայերին մաղթում եմ առողջություն, բարի աշխատանք եւ հաջողություններ»:

Լիդա Եղիազարյան

«Բարի՛ գալուստ, 2023 թվական. թող այս տարի խաղաղության եւ բարության տարի լինի»:

Լիաննա Խաչատրյան

«Թող 2023 թվականը խաղաղություն բերի բոլոր ընտանիքներին, թող բոլոր մայրերը գրկեն իրենց որդիներին, եւ թող պատերազմները լինեն միայն հիշողություն»:

Մարիամ Դանիելյան

«Չգիտեմ՝ ե՞ս եմ միայն, որ ժամանակը հաշվելիս ակամա սկսում եմ 2020 թվականից՝ չսպիացող բեկում ժամանակի ու տարածության մեջ... Թող որ 2023 թվականը բեկումնային լինի 2020-ի հակառակ ուղեծրից, եւ այս անգամ արեւի շուրջ պտույտը լինի աննախադեպ արգասաբեր ու հաղթական...»:

Մանե Ասրյան

«Սրտանց շնորհավորում եմ բոլորիս Ամանորն ու Սուրբ ծնունդը: Թող 2023 թվականը լինի սիրո, համերաշխության տարի: Թող սեւ նապաստակի տարին ողջ աշխարհին բերի խաղաղություն ու բարօրություն: Եղե՛ք առողջ ու երջանիկ»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 22.12.2022
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: